

91(47-925)

U-19

17

11

350



Robert R.

17

350

21041

Երեւանի Հայոց Քաղաքացիական Սրբազան Դատարանի 10-րդ Դ. 2011

Գրառւած է

Երեւանի քաղաքացիական Սրբազան Դատարանի 10-րդ Դ. 2011

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Յունիս 1899

(ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ)

Երեւան

91 (47.925)

Կ-19

ԵՐԵՒԱՆԻ

մ6

1004
14956

Երեւանի քաղաքացիական Սրբազան Դատարանի 10-րդ Դ. 2011

Աշխատասիրեց

ԱՊՐԱՄ ԱՊՐԱՄՅԱՆ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷԶՄԻԱՆԻ

1899

23 APR 1914

Handwritten text at the top of the left page, mostly illegible.

Handwritten text in the middle of the left page, including the word "SET" and other cursive script.

Дозволено цензурою 24 Декабря 1898 г. г. Тифлисъ.

Handwritten text and stamps at the bottom of the left page, including the number "1898" and various official markings.

ՄԵՐ ԴԵՍՏՈՒՆԵՐ

Handwritten text in the top section of the right page, preceding the title.

Մեր գասարաններ մի մեծ սենեակ է. նա ունի վեց կողմ՝ մէկը վերեւից, արին անուանում ենք առաստաղ, միւսը ներքեւից յատակ, իսկ մնացած չորս կողմերը որոնք գտնվում են սենեակի կողքերումը, կոչվում են պնարներ, որոնցից երկուսը կարճ են, երկուսը՝ երկայն. կարճ պատի դէմ գտնվում է կարճ պատ, երկայն պատի դէմ՝ երկայն:

Մեր գասարաններ ունեն մի գուռը, որ գտնվում է աջակողմեան (աջակողմեան, ձախակողմեան, առաջևի յետևի պատ ասելով՝ պէտք է հասկանալ աշակերտների նստած դիրքն ի նկատի առած) երկայն պատի մէջ. դռնով մտնողի ներս են մտնում եւ դուրս են գալիս: Ձախակողմեան երկայն պատի մէջ գտնվում են դասատան չորս լուսամուտները, լուսամուտներով լցոյթներս մշտնադարձ: Մեր դասատանը ունի երկու պատի պահարան, որոնցից մէկը գտնվում է ծոռաջևի կարճ պատի աջակողմեան նակիւնում, իսկ միւսը՝ յետևի կարճ պատի վտարանները ապրանքներով եւ դասատունն ինքն ինքուր ինքն օգտագործելու համար:

Մեր դասապան մեծ մասը բռնում են նրա-
տարանները, որոնց վրայ նստում են աշակերտ-
ները: Յստարանների առաջ՝ աշակերտների դիմաց՝
գրած է մի գրատախտակ, որի վրայ աշակերտները
գրում են կաւիճով գրատախտակի մօտ գտնվում
է մի սեղան և մի աթոռ ուսուցչի համար: Ու-
սուցչին ուսուցանում է, աշակերտներն ուսա-
նում են:

Աշխարհի կոչերը:

Մենք դասարանում ամեն ժամանակ չենք
կարող ասել, թե՛ դուռը գտնվում է աջակողմեան
երկայն պատի մէջ, կամ լուսամուտները գտն-
վում են ձախակողմեան երկայն պատի մէջ և ին-
չորովհետեւ եթէ մենք փոխենք մեր նստելու գիւ-
րք պատերի անուններն էլ կփոխվեն: օրինակ՝ ե-
թէ երեսներս գարձներ դեպի յետեւ պատը, այն
ժամանակ աջակողմեան պատը կը դառնայ ձախա-
կողմեան և ընդհակառակը, յետեւի պատը կը դառ-
նայ առաջեւի եւ ինչ մէկ ուրիշ գեպքում գարձեալ
պատերի անունները կփոխվեն: Այդ պատճառով
պէտք է պատերին այնպիսի անուններ տանք, որ
ինչ դիրքով էլ նստելու լինենք անունները չը
փոխվեն: Բայց դրանից առաջ հարկաւոր է մեզ
իմանալ աշխարհի կոչմերի անունները:

Դիմաւոր կողմեր: Մենք տեսնում ենք, որ ամեն
առաւօտ արեգակն միշտ մի կողմից դուրս է գալիս
և փոքր առ փոքր բարձրանում է երկնքի երեսին մին-
չեւ կէս օրը կամ ճաշը իսկ կէս օրից յետոյ սկսում է
ցած իջնել ու երեկոյեան մայր մտնել դուրս եկած
տեղի հակառակ կողմում: Նոյնպէս տեսնում ենք
որ կայ մի կողմ ևս, որտեղ արեգակն երբեք չէ
անցնում: Ի նկատի առնելով արեգակի դիրքն ա-
ռաւօտեան, ճաշին և երեկոյեան՝ որոշում են
աշխարհի կոչմերն այնպէս.

Այն կողմը, որտեղից ամենայն օր ծագում է
արեգակը, կոչվում է արևելք. այն կողմը, որտեղ ա-
րեգակը մայր է մտնում, կոչվում է արեւմուտք. որ
կողմում արեգակը կէս օրին կամ ճաշին լինում է,
այն կողմը կոչվում է հարաւ. իսկ հարաւի հակա-
ռակ կողմը, որտեղ արեգակն երբեք չէ լինում,
կոչվում է հիւսիս: Արեւելքի դիմացը գտնվում է
արեւմուտքը, իսկ հարաւի դիմացը հիւսիսը: Այդ-
չորս կողմերը՝ արեւելքը, արեւմուտքը, հարաւն և հիւ-
սիսիսը՝ կոչվում են աշխարհիս գլխաւոր կողմեր:
Եթէ մեզ յայտնի լինի աշխարհի կոչմերից մէկը, մենք
կարող ենք գտնել և միւս մնացած երեք կողմերը.
օրինակ՝ եթէ գիտենք հիւսիսային կողմը, մենք
երեսներս կը դարձնենք դեպի այդ կողմը. յետեւի
կողմը կը լինի հարաւ, աջ ձեռքերս կընկնի դե-

պի արեւելք, իսկ ձախ ձեռքերս արեւմուտք:

Երկրորդական կողմեր: Բացի գլխաւոր կողմերից, կան և երկրորդական կողմեր էլ, երկրորդական կողմեր ասում ենք գլխաւոր կողմերի մէջ գտնուած կողմերին: Այն կողմը, որ դրանովում է հարաւի և արեւելքի մէջ, կոչվում է հարաւ—արեւելք կամ արեւելա—հարաւ. հարաւի և արեւմուտքի մէջ գտնված կողմը կոչվում է հարաւ—արեւմուտք կամ արեւմուտա—հարաւ. հիւսիսի և արեւմուտքի մէջ գտնվածը կոչվում է հիւսիս—արեւմուտք կամ արեւմուտա—հիւսիս. հիւսիսի և արեւելքի մէջ գտնված կողմը կոչվում է հիւսիս—արեւելք կամ արեւելա—հիւսիս: Դասաւորումս սրտերի իսկական անունները: Դասաւորումս մէջ որ պատը, դէպի աշխարհի որ կողմն որ գտնվում է, նրա անունովն էլ ինքն է կոչվում. օրինակ դասաւորումս ձախակողմեան պատը գտնվում է աշխարհի դէպի արեւելեան կողմը, դրա համար այդ պատին կանենք արեւելեան պատ. աջակողմեանը՝ գտնվում է դէպի արեւմտեան կողմը, կանենք արեւմտեան պատ և այլն:

Մեր գաղափարն առեւանգները:

Մեր գաղափարս հիւսիսային կողմում գրանվում է հիմնական Ա. գաղափարն արեւելեան

կողմում՝ ս. Սարգիս եկեղեցու փողոցը, հարաւային կողմում Բ. գաղափարն, իսկ արեւմտեան կողմում՝ միջանցքը:

Կազմակերպութիւն (КОМПАСЬ).

Աշխարհիս կողմերի անուններն մենք իմանում ենք արեւդակի շարժվելով, բայց եթէ պատահի որ օրն ամպած լինի, կամ մութ գիշերին անտառումը լինենք կամ ծովի վրայ, այդ ժամանակ մենք չենք կարող իմանալ որն է արեւելքը, կամ թէ որն է արեւմուտքը, հարաւն և ինչ հեռեւայէս չենք կարող իմանալ և թէ ո՞ւր պէտք է գնանք: Բայց այս դիպուածում մեզ կարող է օգնել մի փոքրիկ գործիք, որ կոչվում է կողմնացոյց:

Կողմնացոյցի կազմութիւնը: Երկրիս վրայ մի տեսակ երկաթ կայ, որի անունը մագնիս է: Եթէ գրչահատի բերնի չափ մագնիս վերադնենք և նրա մէջտեղը դնենք ասեղի ծայրի վրայ, նրա մի ծայրը միշտ դարձած կը լինի դէպի հիւսիս, իսկ միւս ծայրը հարաւ: Ասեղն և մագնիսը դրված են արկղի մէջ, որի երեսը ծածկված է ապակիով: Արկղի յատակին դրված է լինում թուղթ, որի վրայ գրված են աշխարհիս բոլոր կողմերի անունները: Ահա այս գործիքն է, որ կոչվում է կողմնացոյց:

կողմնացոյցի գործածութիւնը: Երբ կողմնացոյցը ցոյց տուեց հիւսիս, մենք երեսներս կրդարձնենք դէպի այդ կողմը, յետեւներս անշուշտ կ'ընկնի հարաւը, աջ ձեռքներիս կողմը՝ արեւելքը, իսկ ձախինը՝ արեւմուտքը: այժմ կարող եմք դնալ՝ որ կողմը կամենանք:

Յատակագիծ:

Եթէ մէկ գիրք գնենք գրատախտակի վրայ և նրա չորս եզրերովը կախձով գիծ քաշենք, կը ստանանք զրքի բռնած տեղը գրատախտակի վրայ: Դնենք մէկ զրչահատ ու նրա եզերքով մատիտով գիծ քաշենք, կրկին կը ստանանք զրչահատի բռնած տարածութիւնը թղթի վրայ: Ամեն-մի առարկայի բռնած տեղը՝ գրատախտակի, թղթի, գետնի և կամ ուրիշ բաների վրայ, կոչվում է յատակագիծ: Յատակագիծը ցոյց է տալիս առարկայի երկայնութիւնն և լայնութիւնը:

Ո՛րդ Դասական Երկարութիւն:

Բայց մենք չենք կարող մեծ առարկաների յատակագիծը ստանալ թղթի կամ գրատախտակի վրայ իրենց իսկական մեծութեամբ: Կարող ենք ստանալ փոքր ձևով և այդ կլինի առարկայի մծ-

տաւոր յատակագիծը: Իսկ եթէ կամենում ենք ստանալ մեծ առարկաների իսկական յատակագիծը, օրինակ՝ դասատան, մենք պէտք է չափենք նրա երկայնութիւնն ու լայնութիւնը: օրինակ՝ նրա երկայնութիւնն եղաւ 11 արշին, իսկ լայնութիւնն՝ 7 արշին, մենք թղթի վրայ կը վերցնենք դասատան երկայնութիւնն ո՛չ թէ 11 արշին, այլ 11 մատնաչափ, նոյնպէս և լայնութիւնն՝ 7 մատնաչափ: Այդպէս պէտք է վարվենք, երբ կամենանք գծագրել դասատան պատերը, լուսամուտները, դռները և լին, ընդունելով միշտ արշինի (ուրիշ դիպուածում այլ չափի) փոխարէն մատնաչափ:

Դժաշտի: Որպէս զի առած յատակագիծով իմանան առարկայի իսկական մեծութիւնը, յատակագծի մօտ սովորաբար քաշում են մի այնպիսի գիծ, որի մօտ գրված է՝ թէ նա ինչ իսկական մեծ չափի տեղ է ընդունված: Այդ պայմանաւոր գիծը կոչվում է զժաշտի:

Աշխարհի Կողմերը Եւ Երկարութիւնը:

Յատակագծի վրայ աշխարհի կողմերը նշանակում են այսպէս՝ հիւսիսը՝ վերեւում, հարաւը՝ ներքեւում, աջ կողմում՝ արեւելքը, ձախ կողմում՝ արեւմուտքը:

Մէջ դասարան պարտաւարտութիւնը:

Յատակագծով մենք կարող ենք իմանալ մեր դասատան երկայնութիւնն ու լայնութիւնը, իսկ եթէ կառնուած ենք իմանալ նրա զեանի վրայ բռնած տարածութեան չափը, կը վերցնենք մի կտոր տախտակ, որ չորս կողք ունենայ, ամեն մի կողքի երկայնութիւնը լինի մի արշին, իսկ չորս անկիւններն լինեն իրար հաւասար. այդ տախտակը կը լինի մի չափ, որ կը կոչվի քառակուսի արշին. և որովհետեւ այդպիսի 77 հատ տախտակ հարկաւ որ կը լինի, որ կարգով չարենք դասատան յատակի վրայ այնպէս որ ոչ մի տեղ բաց չմնայ, ուստի կասենք, որ դասատան տարածութիւնն հաւասար է 77 քառակուսի արշինի:

Բայց քառակուսի տախտակներով տարածութիւն չափելը դժուար կը լինի. եթէ գուռատան երկայնութեան չափը 11 արշինը բազմապատկենք լայնութեան չափով՝ արշինով՝ ստացած թիւը ցոյց կտայ՝ թէ քանի քառակուսի արշին կը լինի դասատան տարածութիւնը. և կտանանք (11×7 կամ) 77 քառակուսի արշին:

Մէջ դասարան:

Մեր դասարանի արեւմտեան կողմում գտնված նեղ և երկայն միջանցքը ձգվում է հիւսիսից

դէպի հարաւ, որի արեւելեան և արեւմտեան կողմերում իրար կից գտնվում են միւս դասարանները, որոնց կարգում և տեսչի ու ուսուցչական սենեակները և գրադարանը միջանցքի հարաւային ծայրում գտնվում է դահլիճը: Այդ բոլոր դասարաններն և սենեակները միասին կազմում են մեր ուսումնարանը, որ կոչվում է Նրեւանի թեմական Հայոց ազգային Հոգեւոր դպրանոց, որովհետեւ Հայոց ազգի սեպհականութիւնն է, Հայոց ազգի դրամովն է պահպանվում, Հայոց ազգի որդիքն են այստեղ ուսանում, Հոգեւոր իշխանութեանն է հնազանդվում և գտնվում է նրեւանի թեմի մէջ:

Թեմական դպրանոցի ամբողջ դասընթացն տեւում է իննը տարի, ուրեմն մեր ուսումնարանը բաղկանում է իննը դասարանից, որոնք են՝ ա. բ. և գ. նախակրթարաններ ու ա. բ. գ. դ. ե. և զ. դասարաններ: Եթէ մի դասարանի աշակերտները շատ են լինում, այն ժամանակ նրանց տեղաւորում են երկու դասարանում, որոնք կոչվում են մի և նոյն դասարանի անունով, որովհետեւ դասընթացները լինում են նոյնը. միայն իրարից զանազանելու համար՝ դասարաններից մէկը կոչվում է հիմնական, միւսը՝ զուգընթաց: Նախակրթարաններն և ա. դասարանն ունեն զուգընթաց դասատուներ:

Հիմնական դ. նախակրթարանը մեր դասարանն է որ գտնվում է ուսումնարանի արեւելեան մասում:

Մեր ուսումնարանի աշակերտները:

Մեր ուսումնարանի արեւելեան կողմում ձրգվում է ս. Սարգիս եկեղեցու փողոցը՝ հիւսիսային կողմում գտնվում են մեր հարեան տները, արեւմտեան կողմում գտնվում է առաջնորդարանի պարտէզն, որանդ է և առաջնորդարանը, ուր նստում է Հայոց Սրբազան առաջնորդը: Առաջնորդարանին կից գտնվում է Կոնսիստորիային: Ուսումնարանի հարաւային կողմում գտնվում է քաղաքի ս. Սարգիս մայր եկեղեցին:

Մեր ուսումնարանի և նրա շրջակայի յարաբերութիւնը:

Եթէ մենք մեր դասարանն յատկապէս կը-յենք միւս դասարանների և սենեակների յատկապէս նոյն դիրքով ինչպէս որ նրանք գտնվում են, այն ժամանակ կը ստանանք մեր ուսումնարանի ամբողջ յատկապէսը. իսկ այդ յատկապէսին եթէ կցենք պատշգամբի փողոցի բազի պարտէզի . . . յատկապէսը, այն ժամանակ կստանանք ուսումնարանի շրջակայքի յատկապէսը:

Մեր ուսումնարանի տարածութիւնն է 333 քառ. սաժէն:

Մեր ուսումնարանի թաղի և նրա աշակերտները:

Մեր ուսումնարանն իր շրջակայ տներով, փողոցներով, հրապարակներով . . . միասին կազմում է Չորագիւղ (Նարաքեանդ) թաղը կամ մահալան. սրա սահմաններն են՝ հիւսիսից Կոնսիստորիայի (Թափաքաշ) թաղը, արեւելքից՝ Խանլըբազ (նոր) թաղը, հարաւից՝ ամբոցն ու Զանգուի կամուրջը, իսկ արեւմուտքից՝ Սարգարի այգին և Յիցիանովի ու Գալմի բլրները:

Չորագիւղի տարածութիւնն կլինի մօտաւորապէս 38 դեսետին *):

Մեր աշակերտները:

Կոնսիստորիայի հարաւարեւելք գտնվում է Խանլըբազը որից դէպի արեւելք՝ Ծհար թաղը, իսկ դէպի հարաւ՝ Ծէն-թաղը, իսկ սրանից հարաւարեւելք՝ Դամբուլաղ թաղը, Ծհարից և Դամբուլաղից դէպի արեւելք գտնվում է Նորթ թաղը կամ Զեօլմակչի, որ 1843 թուից առաջ առանձին գիւղ էր: Չորագիւղն և վերեւում յիշված բոլոր թաղերը միասին կազմում են մեր քաղաքը, որ կոչվում է Երեւան: Ռուսները նրան աւում են երկրան (Эривань), իսկ թուրքերը Իրա-

*) Դեսետինը—2400 քառակուսի սաժէն է:

վան (١٢٥٩)։ Երևանը գտնվում է ^{*)} Հրազդան
գետի երկու ափերի վրայ՝ ձախ մակերևութից
(երեսից) 3000 ոտնաչափ բարձրությամբ, ունի
Երևանը մինչև 1441 թ. գտնվում էր Հա-
ջոյ իրաւունքի տակ, որանից յետոյ մէկը միւսի
յեռակից անգամ են նրան Պարսիկներն և Օսման-
ցիները շարունակ 386 տարի իսկ 1827 թ. վեց
գրուսն պաշարումից յետոյ Հոկանմեքիս 1-ին
Ռուսաց, Կովկասեան զօրաց հրամանատար, գորա-
պետ Պապիկչեան անուն է այն Պարսիկներից և
այդպիսով քաղաքն անցնում է Ռուսաց ձեռքը։

Մեր ասպետի ասանանները։

Երևանի հիւսիսային կողմում գտնվում է
Զանաթեղ գիղի հողերը։ արևելեան կողմում՝ Ա-
ւան և Զրկեղ գիղերի հողերը։ հարաւային կող-
մում՝ Աղբաշ, Դուգիւն գիղերի հողերը։ իսկ ա-
րևմտեան կողմում Սորազաւիթ, վերին-Շենգա-
ւիթ, Սեբրին, Շենգաւիթ, Սարգանդար, Զաֆարա-
բաղ, Փարաբար (Շիրաբաղ) և Եղորարդ գիւղերի
հողերը։ Եւ նախքան միասին զգործել զայն ձախ
ա մաղձ զգործում է մաղձի ձախ զգործի զո
այն ^{*)} Արեւելեան երկայնութեան 620, 241, 251, 1-ի և
հիւսիսային լայնութեան 400, 91, 411-ի տակ բարե-
խառն գոտու մ։

Մեր ասպետի ասանանները։
Եթէ մեր ուսումնականի շրջակայքի յատա-
կազմին կցենք հարևան տների փողոցներին հրա-
պարակների... յատակագծելը այն Ժամանակի կը
ստանանք Չորագիւղ թաղի յատակագիծը։ Իսկ
եթէ արևմտ կցենք միմեք թաղերի յատակագծերը
կը ստանանք մեր քաղաքի յատակագիծը։
Մեր քաղաքի ամբողջ տարածութիւնն է 4641
դեսետարին և 1137 քառ. սոսէն, իսկ այդ տա-
րածութեան շրջանորոն է 43 վերստ։
Մեր ասպետի ասանանները (Երևան) ասպետ
մաղձի ձախ զգործի (սարգանդաւ) ասպետ
Եթէ մենք բարձրանանք Սորքի թաղը և այն-
տեղից նայենք դէպի մեր քաղաքը, մենք կը տես-
նենք, որ Երևանի տները, փողոցներն ևլն, մե-
զանից ցածր են մնացել, ուրեմն մենք ընտրո՞ւ
ենք կանգնել։ Սրանով մենք իմանում ենք, որ
մեր քաղաքի մակերևոյթը հարթ հարւումսար չէ. Եւ
մեզ կ'երևայ ինչպէս մի մեծ կաթմայ, որով հետեւ
քաղաքի մէջտեղը փոս է, իսկ կողքերումը գոթե-
վում են բարձրութիւններ, բացի հարաւ—արև-
մտեան կողմից, որտեղ գտնվում է Մազկիբեարի
դաշտավայրը։
Դաշտավայր կոչվում է երեւի հարթ հաւասար
մասը։

Մեր քաղաքի հիւսիսային կողմում գտնվում են Ղզլլալայի, Կաքաւի (Կաքաւակոնդ) Քեօշաքլուի, և Ժիժեռնակարերդ (Պլանդաղ) բլուրները:

Բլուր ասում ենք երկրի վրայ գտնված այն բարձրութիւններին, որոնք 2000 սանտիմի բարձրութիւն ունեն ծովի մակերևոյթից:

Ղզլլալայից հարաւ գտնվում է Կոզեա բլուրը, որտեղ գտնվում է Յովհաննէս Կոզեռն վարդապետի ու Մովսէս կաթողիկոսի տապաններն և քաղաքի Հայոց գերեզմանատունը:

Արևմտեան կողմում գտնվում են Դալմի, Յիցիանովի և Բորչի թափա (Հերակլէի) բլուրները: Հարաւային կողմում գտնվում են Մուխանաթափա (Մոսորոփարադ) բլուրն և Ահմանկան լեռնաշղթայի շարունակութիւնն, որ ձգվում է արևելքից արևմուտք. արևելեան մասը կոչվում է Դսրքանոց, իսկ արևմտեանը Դաճհանքի սար:

Սառ կամ յետ ասում ենք այն բարձրութեանը, որ 2000 սանտիմից ացելի բարձր է, իսկ լեռնաշղթայ ասում ենք այն սարերին, որոնք շղթայի նման իրար յետեւից գնում են: Սարի ամենավերին մասը կոչվում է գագաթ, միջին մասը լանջ կամ դօշ, իսկ ամենացածրի մասը ստոն:

Քաղաքի արևելեան կողմում գտնվում է Ողջաբերդի սարերի շարունակութիւնը:

Լեռների վրայ գտնված հարթութիւններին ասում ենք յոսկադաշ կամ սարահարթ: Երկու սարի մէջ գտնված լայն

և երկայն տարածութեանն ասում ենք հովիտ, իսկ նեղ և երկայն տարածութեանը՝ ձոր:

Հրազդանի վրայ գտնվում են Հաջի Պետրոսի (Դարազանի), Հաջի-Մէյիթնոց, Մոյրունբուլաղի, Դալլաքգեօլի, Մեյիթնոց և Ռաջարի ձորերը: Այս բոլորի միջով հոսում է Զանգի գետը: Մորքունը գտնվում են՝ Բերդաձոր, Աղուէսաձոր, Արբասի ձոր կամ Արբասդարա և ին:

Մեր ասում ենք:

Երևանի միջով հիւսիս-արևմուտքից դեպի հարաւ-արևմուտք հոսում է Հրազդան կամ Զանգի գետը:

Գետ ասում ենք այն ջրին, որ վազում է խոր և երկայն փոսի միջով, այն փոսը, որն միջով հոսում է գետը, կոչվում է հուն կամ դաշ: Գետի հունի կողքերը կոչվում են ափ կամ եզր, որ լինում է աջ և ձախ ափ, եթէ կամենում ենք իմանալ գետի աջ և ձախ ափերը, պէտք է հանգնենք գետի մօտ, երեսներս դարձնենք այն կողմը, ուր հոսում է գետն և մենք մեզ պէտքէ ընդունենք կանգնած գետի մէջ, այդ ժամանակ մեր աջ կողմի ափը կը լինի գետի աջ ափը, իսկ ձախ կողմինը՝ գետի ձախ ափը:

Գետերը յառաջանում են ձիւնի հալուելուց կամ աղբիւրներից:

Հրազդան գետը կազմվել է բազմաթիւ աղ-

1567
1001



բիւրներից, թէպէտ իր սկիզբն առնում է Սեա-
նի (Գեղամի) լճից:

Ամեն-մի գետ ունի երեք մաս-դետի այնտեղը,
որտեղ նա իր սկիզբն է առնում, ասվում է գետի
վերին մաս, իսկ այնտեղը, որտեղ գետը վերջանում է,
ասվում է ստորին մաս. մնացած տարածութիւնն աս-
վում է միջին մաս: Գետի վերին մասը կոչվում է գե-
տի ակունք, իսկ ստորին մասը՝ գետաբերան:

Գետերի ջուրը միշտ միաշափ չէ լինում. նա եր-
բեմն խիստ շատանում է և ամբողջ գուրս է գալիս.
գա կոչվում է յորդորքիս կամ առաստորքիս գետերի:
Գետերը յորդանում են գարնանը, երբ ձիւնը հալվում է
և շուտ-շուտ անձրեւ է գալիս. այդ ժամանակ գետի ջու-
րը շատ բարձրանալով՝ ծածկում է ցածր ամերը և
շրջակայքը. այդպիսի տեղերը կոչվում են խաղ կամ հե-
ղեղային տեղեր: Գետն այդպիսի տեղերում թողնում է
սիւղմ կամ առաղ կամ գետաբար: Գետի թողած տեղմը շատ
բարեբեր է լինում:

Թէպէտ Հրազդանը գարնանը յորդանում է
բայց նա չ'ունի հեղեղային տեղեր, որովհետեւ ամ-
պերը բարձր բլուրներ են կազմում:

Հրազդան գետի ամերն ամեն-տեղ միմեան-
ցից հաւասար չեն հեռացած. կան տեղեր
որտեղ ամերը շատ են հեռացած միմեանցից, այն-
պէս որ, գետի ջուրը մի քանի ճիւղերի է բաժան-
վում և դարձեալ միանում է ու մէջ տեղը թող-
նում է ցամաք հող:

Այն ցամաքը, որ ամեն կողմից շրջապատված է
ջրով, կոչվում է կղզի:

Կան այպիսի տեղեր էլ, որտեղ ամերը շատ
մօտիկ են միմեանց. գետն այնպիսի տեղերում շատ
ուժով և աւելի խոր է հոսում: Տեղ-տեղ ջուրը
խոր մտած է լինում ցամաքի մէջ:

Ցամաքի մէջ խորը մտած այն ջրն ասում ենք
ծոց: Մեծ ծոցերին ասում ենք ծովածոց, իսկ փոքր ծո-
ցերին՝ զոց կամ խորշ: Նեղ և երկայն ծոցը, որ գտն-
վում է երկու ցամաքների մէջ, կոչվում է ջրանցք իսկ
եթէ շատ նեղ է, կը կոչվի եղոց: Ջրանցք կոչվում է
և այն գետը, որ մարդիկն են փորում և որը սկսվում
է իրենից աւելի մեծ գետից:

Տեղ-տեղ էլ ցամաքն է խորը մտած ջրի մէջ:

Ջրի մէջ խորը մտած ցամաքն եթէ բարձր է,
կազմում է հրաւանդան, իսկ եթէ ցածր է՝ քերակղզի: Թե-
րակղզի կամ հրաւանդան կոչվում է այն ցամաքը, որ երեք
կողմից շրջապատուած է ջրով, իսկ մի կողմից կպած
է ցամաքին: Երբ թերակղզին շատ երկայն, նեղ և
հարթ-հաւասար մակերևոյթ ունենայ, այն ժամանակ
նա կը կոչվի լեզուակ կամ քաղուկ: Ցամաքի այն նեղ
կտորը, որ մնացնում է իրար հետ երկու մեծ ցամաք-
ներ, կոչվում է պարանոց:

Հրազդան գետն անձրեւների ժամանակ կամ
գարնանը ձիւնի հալվելուց աւելի յորդանում է,
իսկ ամառը շատ է նուազում. (այդպիսի գետե-
րը հեղեղատ են կոչվում):

Հրազդանը մեղ շատ օգուտ է տալիս. նա

մեզ տալիս է խմելու ջուր, համեղ ձկների, պտուղներում է ջրազացների անիւները, ոռոգում է մեր քաղաքի մեծ մասը: Երա օգուտն աւելի շատ կը լինէր, եթէ ջուրը չափազանց շատ լինէր, այն ժամանակ նրա վրայ կը լողային լաստեր (աօփեր), նաւակների, նաւեր և այդպիսով Երեւանը կ'ունենար նստահանգիստ. բայց գետի մէջ շատ տեղ երկում է նրա յատակը, որտեղ խոտեր բուսնելով դառնում է ծանծաղ. (այդպիսի գետին աւտում են սահանքաւոր գետ):

Հրազդան գետի մի ափից միւսն անցնելու համար՝ տեղ-տեղ նրա ափերը միացած են միմեանց հետ կամուրջներով: Կամուրջներից մէկը քառակամար է և շինված է կոփածոյ քարից, իսկ միւս կամուրջները փայտէ գերաններ են.

Հրազդանը գնում՝ թափվում է Երասխ (Արաքս) գետի մէջ և կազմում է նրա վտակը: Եթէ մի գետ թափվում է մի ուրիշ գետի մէջ, նա կոչվում է վտակ:

Երասխ գետը գնում՝ խառնվում է Կուր գետի հետ (խառնվելու տեղը կոչվում է գետախառնուրդ), ապա երկուսով միասին (կոչվում են՝ Սալիանա) թափվում են Կասպից ծովը:

ԾԱՊ. ասում ենք այն մեծ ջրերն, որ խոր մտած է լինում ցամաքի մէջ և չըջապատված է կղզիներով: Ծովից մեծ ջրերն ասում ենք օվկիանոսներ:

Ջանդուի ափին շատ տեղ առուների ջուրը բարձր Ժայռերի վրայից ուժով թափվում է ցած և կազմում է ջրնկեց կամ՝ ջրվէզ:

Մեր քաղաքի միջով արեւելքից դեպի հարաւ հոսում է գետառ կամ՝ Կրկնուլաղ (քառասուն աղբիւր) գետն և թափվում է Սորաղաւթի ջրանցքի մէջ, որ հանած է Հրազդանից:

Մեր քաղաքն ունի հինգ նշանաւոր ջրանցք, որոնք են՝ Դալմա, Սորաղիւղ, Մամուի, Աբուհայեթ և Մեծ առու:

Դալմա ջրանցքն սկսվում է Հրազդանի աջ ափից՝ այնտեղից, որ դանվում է քաղաքի Դարաբաղ կոչված տեղի զիմացն և անցնելով փոքր տարածութիւն՝ մտնում է Դալմի բլուրների մէջ փորած աօնելը, որ մօտ 300 սաժ. երկարութիւն ունի և դուրս գալով այնտեղից բաժանվում է երեք առուների, որոնք ոռոգում են Դալմա կոչված տեղի բոլոր այգիները:

Սորաղիւղ ջրանցքը սկսվում է Դալմա ջրանցքից ցած՝ դարձեալ Հրազդանի աջ ափից: Սա ոռոգում է Չորաղիւղի և քաղաքի Սորաղիւղ կոչված տեղի այգիները:

Մամուի ջրանցքը սկսվում է Հրազդանի ձախ ափից՝ Բանաքեռ գիւղի մօտից և գալով քաղաքի Կոնդ թաղը, այնտեղից բաժանվում է մանր ջր-

բանցքների կամ առուների, որոնք ցրվում են քաղաքի մէջ:

Աբուհայեթ ջրանցքն էլ սկսվում է Հրազդանի ձախ ափից՝ Մամուի ջրանցից աւելի բարձր: Եւ առողում է Աբուհայեթի, Բեօջաքուի, Շհաբի այգիները, և թափվելով Թօխմախ լիճը՝ ոռոգում է քաղաքի հանդերը:

Մեծ առու ջրանցքն սկսվում է Աւան գիւղից ներքեւ՝ Գետառի ձախ ափից և ոռոգում է Մորք թաղի այգիներն և քաղաքի հանդերը:

Հրազդանից հանված են ևս երկու ջրանցքներ՝ որոնք պատկանում են ջրադացների անիւները: Երևանում բացի գետերի ջրից, գործ են ածում և աղբիւրների ջուր:

ԱԳՔԻԻՐ ասում ենք այն ջրին, որ բղկում է գետնի տակից: Աղբիւրները լինում են երկու տեսակ՝ քնակակաւ և արհեստակաւ. քնակակաւ աղբիւրները ջրերը լինում են տաք և սառն. այդ տաքութիւնը գետնիցն է. եթէ մենք գետնը խիստ շատ փորենք, կը հասնենք այնպիսի տեղ, որտեղ ամեն բան տաքութիւնից հալված է. անձրևների ջրերը մտնելով գետնի մէջ և խոր ծծվելով՝ մօտենում են այդ տաքացած տեղերին և իրանք էլ տաքանալով՝ կրկին բարձրանում են երկրի երեսը:

Կան այնպիսի աղբիւրներ, որոնք ջուրը զանազան համ է ունենում, օրինակ՝ երկաթի, պղնձի, ծծումբի, աղի, թթու և ինչ որովհետեւ անցնում են այդ տեսակ հանքերի մօտով և այդ հանքերը լուծվում են նրա մէջ:

այդ տեսակ աղբիւրներն ասում են հակաշին աղբիւրներ, որոնք լինում են տաք և սառը. Հանքային աղբիւրներն մէջ լողանալով բժշկվում են շատ հիւանդներ:

Երևանում աղբիւրները գտնվում են՝ Հրազդանի ու Գետառի ափերում, որոնք առողջարար ջուր ունին և Սօհութլուղ կոչված տեղում, որտեղի աղբիւրների ջրերի մէջ լուծված են զանազան տեսակ անպէտք աղիք: Սյդ ջուրը խմելուց ցաւ է առաջ դալիս որովայնում:—

— Աստաֆեան փողոցում գտնվում են մի քանի արհեստական աղբիւրներ, որոնք ջուրը գալիս է երեսը ծածկված մի փոքրիկ ջրանցքով, որ հանած է Գետառի աջ ափից՝ Մորքի տակից:

Մեր քաղաքում բացի գետերի և աղբիւրների ջրերից, գործ են ածում նաև ջրհորի ջուր:

Արեւիցէ տեղ եթէ գետնը փորենք, կը հասնենք այնպիսի տեղ, որտեղ ժողովված են լինում անձրևները և հալված ձիւների ջրերը. այն փորած հորը կոչվում է ջրհոր: Զրհորի ջուրը խմելու համար շատ օգտակար չէ, որովհետեւ նրա մէջ շատ կիր է գտնվում: Երևանի ջրհորների ջուրը, բացի այդ և իրանց մէջ ունին փթած առարկաների շատ մնացորդներ, որոնցից ջուրը շատ շուտ հոտում է:

Երևանի հարաւային կողմում գտնվում է Թօխմախ կոչված արհեստական լիճը (լակ):

Լիճ ասում ենք այն ջրին, որ շուր կողմից շրջա-

պատված է ցամաքով: Լինճը կազմվում է բազմաթիւ աղբիւրներից և կամ մի քանի գետերից, որոնք հոսելու ժամանակ պատահելով միմեանց, լցվում են մի փոսի մէջ և կամ թէ մարդիկ մի մեծ փոս փորելով ջուր են լցնում նրա մէջ և կազմում լիճ. ուրեմն լճերն ևս լինում են երկու տիպակ՝ բնական և արհեստական: Լճերի յատակը հաւային է լինում, այդ պատճառով ջուրը չէ ծծվում հողի մէջ: Լճերի ջուրն ոչ աւելանում է և ոչ պակասում—որքան ջուր բնութանում են գետերից, աղբիւրներից և անձրեւից, այնքան էլ դուրսընթացում են: Լճերի ջուրը աղբիւրի ջրի համ ունի. երբեմն էլ աղի և դառն է լինում:

Երևանի հարաւային կողմում՝ Դամբրուլաղի և ամրոցի մէջ, գտնվում են շատ ճահճոտ տեղեր:

ՃԱՀԻՃ ասում ենք այնպիսի տեղին, որ միշտ խոնաւ, աղմուտ և թանձր է լինում:

Այն ճահիճը կազմվել է Դամբրուլաղի աղբիւրներից և այն ակտոտ ու անպէտք ջրերից, որ դալիս էին այստեղ քաղաքի բաղնիսներից: Պարսիկների կառավարութեան ժամանակ այդ տեղերում տնկված էին ծառեր, իսկ բաղնիսների անպէտք ջրերը ջրմուղներով դնում էր աւելի ներքեւ. բայց Երևանի բերդի պաշարման ժամանակ, այդ բոլորը փչացան և ջրերը կանգնելով հողի երեսին՝ ճահիճ դոյալաւ. ճահիճը աւելի մեծացաւ, երբ միացաւ ամրոցի ջրով լցված խրամի հեռ-

բայց հիմայ հեղհեղակ, այդ ճահիճները ցամաքում են:

Մեր հասցանի օդը:

Մեզ շրջապատում է օդը, բայց մենք նրան չենք տեսնում, որովհետեւ նա անզոյն է և թափանցիկ. բայց մենք նրան զգում ենք շնչառութեան ժամանակ և մէկ էլ՝ երբ մեր երեսին խրվում է իբրեւ հով կամ քամի:

Օդը հարկաւոր է ամենքի համար—մարդ, կենդանի, բայց ամենքն էլ օդ են շնչում, ատանց օդի կրակըն էլ չի այրվում: Օդը շատ թեթեւ է, բայց էլի ունի ծանրութիւն: Օդի ամենալեւին ծաւերը շատ թեթեւ են, բայց էլի նոքա ճնշում են ներքին ծաւերի վրայ և թանձրացնում: Այսպիսով վերին ծաւերն իրանցից ցածր գտնված ծաւերին ճնշելով՝ թանձրացնում են, այնպէս որ, ամենացածր՝ երկրին կպած օդի ծաւերը շատ ճնշված՝ թանձր են և արեգակից էլ շատ տաքանում են, այն ինչ վերին նոսր ծաւերը շատ քիչ են տաքանում: Օդը տաքութիւնից լայնանում է, իսկ ցրտից՝ սեղմվում:

ՋԵՐՄԱՆՔ: Օդի տաքութեան չափն իմանալու համար, գործ են ածում քլումաչափ կոչված գործիքը: Սա ազակէ մի խողովակ է, որի մէջ կետով չափ լցրած է սև գիւղի և կպցրած է մի փոքրիկ տախտակի վրայ, որի վրայ նշանակված են հաւասար բաժանմունքներ կամ ստիմաններ՝ թուերով, դեցոյից (0) վերեւ մինչև 80 և դրոյից ցած՝ 1, 2, 3 և ալն մի քանի աստիճան: Եթէ ջերմաչափը դնենք հալվող ձիւնի մէջ, սնդիկը

է իջնի մինչև զերօ, իսկ եթէ դնենք եռացող ջրի մէջ՝
կը բարձրանայ մինչև 80-ը: Զրօյից վերև գտնված առ-
տիճաններն տաքութեան աստիճաններն են, իսկ զերօ-
յից ցած գտնվածները՝ ցրտութեան: Եթէ սենեակում
ջերմաչափի սնդիկը հասնի զերօյից վերև, օրինակ 14
աստիճանի մօտ, այդ նշանակում է, որ սենեակի տա-
քութիւնն է 14 աստիճան կամ նշանակում են այսպէս՝
+14⁰, իսկ եթէ զրօյից ցած լինի, օրինակ 4 աստիճանի
մօտ, այդ նշանակում է, որ սենեակի օդի ցրտութիւնն
է 4 աստիճան, կամ՝ —4⁰: Այս տեսակ ջերմաչափն
աւելում է Ռէօմիւրի ջերմաչափ:

ՔԸՄԻ: Օդը տաքանալով՝ լայնանում է, լայնա-
նալով՝ թեթեւանում է, թեթեւանալով՝ բարձրանում է
վերև. նրա տեղն իսկոյն վերևից դալիս է ցուրտ օդ,
և այսպէս միշտ ցուրտ օդն իջնում է, իսկ տաք օդը՝
բարձրանում. այդպիսի շարժողութիւնն պատահում է
ամեն տեղ: Օդի այդ շարժողութիւնն աւելում է քա-
մի: Քամին եթէ բերում է իրեն հետ ջրային գոլորշի-
ներ, աւելում է խոնաւ քամի, իսկ եթէ ոչ՝ չոր: Բացի
դրանից կան և տաք ու ցուրտ քամիներ:

Երևանում քամիները փչում են հիւսիսա-
յին և հիւսիս-արեւելեան կողմից, որովհետեւ քա-
ղաքի այդ կողմում՝ գտնվում են Սոր-Բայազիտ
գաւառի սարերը, իսկ հարաւ և հարաւ-արեւմու-
եան կողմում՝ Արարատեան դաշտավայրը, այդ
պատճառով սառը օդն այն բարձրութիւններից
դիմում է դէպի հարաւ և հարաւ-արեւմուտք՝ անց-
նելով մեր քաղաքի վրայով: Քամիներն Երևանում

սաստկանում են Մարտի կիսից մինչև Սեպտեմ-
բերի սկիզբը, այնուհետեւ նուազվելով՝ Յունուարին
համարեա թէ քամի չէ լինում:

Եղանակ (կլիմայ): Օդն ամեն տեղ և ամեն
ժամանակ մի տեսակ չէ լինում: Երբեմն նա լի-
նում է ցուրտ, երբեմն տաք, երբեմն չոր, երբե-
մն խոնաւ, երբեմն փոստկար, երբեմն առողջա-
րար և չն: Օդի այդ յատկութիւնը կոչվում է ե-
ղանակ (կլիմայ):

Երևանում լինում է չորս եղանակ՝ գարուն,
ամառ, աշուն և ձմեռ:

Ձմեռն՝ եղանակն Երևանում լինում է խիստ
ցուրտ մինչև 20⁰, որովհետեւ քաղաքին մօտիկ զը-
անվում են՝ (հարաւային կողմում) Մեծ ու Փոքր
Մասիս (հիւսիսային կողմում) Արագած, Շամիրա-
մի (Քեօթանդաղ) և Արայի (Ղառնիկարիկ) բարձր
սարերը, որոնցից առաջին երեքի զագաթները մըշ-
տական ծածկված են լինում ձիւնով: Իսկ միւս-
ները դեռ ձմեռը չսկսված են ծածկվում: Բայց
ամառն՝ եղանակը լինում է սաստիկ այրող՝ մին-
չև +45⁰, համարեա զարուն չէ լինում, որովհե-
տեւ ձմեռուանից յետոյ սկսում է միանգամից տա-
քանալ օդը և այդպէս շարունակվում է մինչև
հոկտեմբեր ամսի կէսը:

Տապերն աւելի սաստիկ կը լինէին Երևա-

նում, եթէ այստեղ չփչէին պարբերական քամի-
ներ, որոնք մեղմացնում են ամառուան տաք կլի-
ման: Երևանի կլիման առողջութեան համար ընդ-
հանրապէս վատ է: Առողջ կլիմայ ունեն միայն
Կոնգի և Նորքի թաղերը, որոնք դանձուր են
բլուրների վրայ:

Այն ժամանակն է, օգը խոնաւ լինում, երբ
նրա մէջ կան ջրային գոլորշիներ, որոնց ասում
ենք՝ մէգ կամ մառախուղ, ամպ, անձրև: ձիւն
կարկուտ, ցոյղ և եղեաֆն:

ՄԵԳ. կամ ՄԱՌԱՒՈՒՂ. Ամեն ժամանակ ջրե-
րեց գոլորշի է բարձրանում. այդ գոլորշին տարածվում
է օդի մէջ: Երբ որ օդը ցրտում է, գոլորշիները դառ-
նում են շատ մանր պղպղակներ և սկսում են լողալ
օդի մէջ՝ երկրի երեսին. մենք դոցա ասում ենք մա-
ռախուղ, մշուշ, մեգ: Ինքնաեւից բարձրացող գոլորշին
էլ մէգ է:

Երևանում մէգը պատահում է առաւելա-
պէս ձմեռը:

ԱՄՊ. եթէ գոլորշիները բարձրանում են դէպի
երկինքն և այնտեղ են մէգ դառնում, այն ժամանակ
նոցա ասում ենք ամպ: Ուրեմն ամպն ու մէգը միևնոյն
բաներն են, միայն այն դանաղանութեամբ, որ ամպը
մէգից շատ բարձր է լինում և թանձր:

Երևանում երկինքն ամպած է լինում զըլ-
խաւորապէս աշնանը, ձմեռը և դարնան սկզբներին:
ԱՆՁՐԵՒ. եթէ ամպերը սառչում են, այն ժա-

մանակ պղպղակները միանալով իրար հետ, կաղմում են
կաթիլներ, որ օդի մէջ չը կարողանալով մնալ՝ ընկ-
նում են ցած, որոնց ասում ենք անձրև:

Երևանում մեծ քանակութեամբ անձրև է
գալիս դարնանը և աշնան սկզբներին:

ՁԻՒՆ. եթէ ամպերն աւելի են սառչում, այն
ժամանակ պղպղակներն ևս սառչելով ու միանալով
իւրար հետ՝ դառնում են բիւրեղանման և գեղեցիկ ասա-
ղերի ձևով թափվում են երկրի վրայ, որոնց ասում
ենք ձիւն:

Երևանում գալիս է մինչև 12 վերշոյ հաս-
տութեամբ ձիւն:

ԿԱՐԿՈՒՏ. Ամառ ժամանակ անձրևների կաթիլ-
ները ճանապարհին խիստ քամիների պատահելով՝ սառ-
չում են և սառած էլ թափվում են երկրի վրայ,
զբանց ասում ենք կարկուտ, որ լինում է կաղնեց սկսած
մինչև հաւի ձուի մեծութեամբ:

Երևանում կարկուտ գալիս է մեծ մասամբ
Ապրիլ, Մայիս և Յունիս ամիսներում՝ կաղնի
մեծութեամբ:

ՅՈՂ և ԵՂԵԱՄ. Գիշերները երկիրն աւելի է
սառչում, քան թէ օդը. զրա համար օդի մէջ գալն-
ված գոլորշիները, երբ դիպչում են սառը երկրին,
սառչում են և դառնում ջուր և դարնան ու ամառ
ժամանակներում նստում են երկրի աւարկանների վրայ՝
մանր կաթիլներով, որոնց ասում ենք ցոյղ: Աշնան և
ձմեռը ցոյղը սառչում է և սառած է նստում առա-
կաների վրայ. այդ ժամանակ նրան ասում ենք եղեաֆն:

Մեր Ժողովի Բայրերը:

Երևանում գտնվում են այնպիսի տներ, որոնք ունեն ընդարձակ բակեր, այգիներ, պարտեզներ, բանջարանոցներ, բուրաստաններ: Այգիների մեծ քանակութիւնը գտնվում է քաղաքի սահմաններում՝ Բեօշաքլու, Դալմա, Նորազիւղ կոչված տեղերում: Այգիները բուսումնէն քաղաքի մեծ մասը:

Այգիներում և պարտեզներում բուսնում են տեսակ-տեսակ պտղատու ծառեր և թփեր, օրինակ՝ ծիրանի, խնձորի, սերկէլի, տանձենի, ընկուզենի, կաղնի, գեղձի, թթենի, սալորենի, նշենի, բալենի, կեռասենի, կծոխի, նռենի, թզենի, խաղողի, մարու (մալինա), հաղարձի (սմօրիդինա) ևլն: Այգիներում և պարտեզներում բուսնում են նոյնպէս և շատ անպտղատու ծառեր, օր. ուռենի, բարդի, դարազաջ, թեղի, չինարի, հացենի (գեօրուչ), ակացի ևլն: Բաղաքի մի քանի փողոցների երկու կողմերում տնկված են մեծ մասամբ ուռենիներ, իսկ հասարակաց դրօսարանները՝ Ագէք-ստնդրեան, Անգղիական և Սարգարի պարտեզները լիքն են թէ պտղատու և թէ անպտղատու ծառերով:

Բանջարանոցներում բուսնում են՝ սիսեռ, լորի, կաղամբ, ճակնդեղ (բազուկ), սոխ, սխտոր, դադար (ստեպղին), բոդկ, պղպեղ, պորինջան՝ սև և

կանաչ (յորմաճ), սիմինդր (եգիպտացորեն), բակլայ, վարունկ, սեխ (դուդմայ), ձմերուկ, դդում կարտփիլ, գետնախնձոր, կոտեմ, ռեհան, սամիթ, անանուխ, թարխուն (նուիճ) և այլն: Բանջարանոցի մեծմասը գտնվում է Սավգիքեարի դաշտավայրում:

Բուրաստանները լիքն են՝ բաղմատեսակ ծաղիկներով, օրինակ՝ վարդ, մանուշակ, սուսանբար, նարգիզ, նունուֆար, տուղդ, դանդրի ծաղիկ, միխակի ծաղիկ, գեօրգի, շաբոյ, երեմ, փիփերթի ծաղիկ, շուշան, սարգարի ծաղիկ, գիւլիսաբայի, հինի ծաղիկ, դեղին (թոփ) ծաղիկ, կոտեմի ծաղիկ, թաւշեայ (մախմուրի) ծաղիկ, զամբէղ ևլն: Իսկ այգիների և պարտեզների գոյնգոյն վայրերի ծաղիկներին թիւ չ'կայ:

Խոտերից այստեղ ցանում են միայն առոյտը (եօնջայ), որ գործ է դրվում իբրև կերակուր անասունների, իսկ հացաբոյսերից՝ ցորեն, գարի կանփ և մասամբ էլ վարսակ, կան և բամբակի արտեր էլ: Իսկ ինքնաբոյս խոտերը ծածկում են այգիները և պարտեզները, նրանցից շատերը բնակիչները գործ են դնում իբրև կերակուր, օր. շրէշը, բոխին, բոլին, դանդուռ, փիփերթը, սիբեխը, թրթնջուկը, ձնեբեկը, կապուռ և այլն: Միջանիսըն էլ գործ են դնում իբրև դեղորայք, օր. ճարձարտուկը, լուածաղիկը, անանուխը, մի քանիսից

էլ ներկ են պատրաստում օր. ասորնից, աւելուկից և այլն:

Մէր Բաղաբի կենդանիները:

Մեր քաղաքի կենդանիներն են՝ կովը, գոմէշը, ոչխարը, այծը (որոնց կաթը կամ վաճառում են և կամ իւզ ու պանիր են պատրաստում), եղը (սոցա կաշուից պատրաստում են կօշիկներ, իսկ ոչխարի կաշուից և գլխարկներ), էշը, ձին, ուղտը, ջորին, շուն, կատու, մուկ, չղջիկ, բու, խըլուրդ, նապաստակ (որսի կենդանի), ոզնի, գորտ, խնդեփան, ձուկը (կարմրախայտ, կապիտ, սարիգեօզ, մուրդի, գօձի և այլն), օձ, լորդու, մողէս, աղբուկ, որդ և այլն:

Թռչունները են՝ հաւ, հնդուհաւ, աքաղաղ, սագ, բադ՝ ընտանի և վայրենի (որսի թռչուն), կաքաւ՝ ընտանի և վայրենի (որսի թռչուն), աղաւթի, ծիտ, ագռաւ՝ սև (որսի թռչուն) և սպիտակ, կաչաղակ, կոցաճար, բազէ, իսկ զարնանը թռչում են մեր քաղաքը շատ և երգող ու գեղեցիկ թռչուններ, օր. սոխակ, դեղձանիկ, կանեփուկ, թուլթակ, լոր, ծիծեռնակ, արտուտիկ, սարեակ, տարմ (Ս. Յակոբի թռչուն), արագիլ և այլն:

Միջատներն են՝ մլակ, մոծակ (Մայիսի կիսից մինչև Սեպտեմբերի կեսը սաստիկ անհանգիստ

են անում բնակիչներին՝ մեծ մասամբ զիշերները, ճանձ, շնաճանձ, մեղու, կրէտ, ոջիլ, փայտօջիլ, լու, լուսատտիկ (բղէղ), ճպուռ (ճոխկ), խմբիւն, թիթեռ, թրթուռ, շերամի որդ, սարդ, կարիձ, որ լինում է դեղին և սև, վերջինիս խայթոցը մահաբեր է լինում. կայ և մորմ և այլն:

Մէր Բաղաբի համեմէրը:

Այն երկիրը, որի վրայ շինված է մեր քաղաքը, զանազան հողերից և քարերից է բաղկացած. նրա մէջ կայ սևահող, կաւահող, աւաղ, աւաղահող, որձաքար, սպաքար և լին. շատ անդ կաւը ժամանակի քնթացքում գարձել է քար (քաւանդ կաւահանք) և ստացել է կարմիր ու մոխրի գոյն: Մեծ քանակութեամբ այգիլիս քարի (քաւանդի) հանքեր գտնվում են Դամբուլաղում և Թոխմուխ լճի շուրջը: Իսկ աներում զանազան քարեր և պիտոյքներ շինված են զանազան մետաղներից և թանկագին քարերից, օրինակ՝ երկաթից, պղնձից, ցինկից, անագից, ոսկուց, արծաթից, գեղնապղնձից, լուսնոսկուց, գոհարից, զմրուխտից և լին:

Երևանի բնակիչները:

Երևանն ունի մօտ 29000 բնակիչ, որի կեսը Հայեր են, իսկ մնացածները՝ Ռուսներ, Թուրքեր, Պարսիկներ, Հրեայներ, Վրացիներ, կան նաև մի

քանի Յոյներ, Չերքեզներ, Ասորիներ, Դաղդիացի, Դերմանացի, Լէհեր ևլն:

Երևանում գործածական լեզուներն են՝ Ռուսերէնը (պետական լեզուն), Հայերէնը, Թուրքերէնը ևլն:

Բնակչաց պարապմունքը: Մեր քաղաքի բնակիչները գլխաւորապէս պարապում են այգեգործութեամբ և պարտիզպանութեամբ:

Երևանն իւր կլիմայով ամբողջ կայսերութեան մէջ առաջին յարմար տեղին է այդեգործութեան համար, առատ և փարթամ կարող են աճել ոչ միայն կովկասի ամենատեսակ բերքերը, այլ և կարելի է տեղափոխել այստեղ օտար բերքեր:

Կան և երկրագործութեամբ պարապողներ էլ: Բայց վաճառականութեամբ, պարապողներն էլ սակաւ չեն. համարեա բոլոր մեծ վաճառականները Հայեր են, որոնք առնում և վաճառում են ամենայն տեսակ ոսկէ, արծաթէ, երկաթէ, պղնձէ, ապակէ, յախճապակէ, կաշուէ, բրդէ, մետաքսէ, բամբակէ, թղթէ և շատ ուրիշ տեսակ իրեղէններ: Գլխաւոր վաճառականական տեղերն են քաղաքի խանա, վաճառականական հրապարակը, Աստաֆեան փողոցն ևլն: Այն ամենն, ինչ որ մեր քաղաքում չկայ, իսկ ուրիշ քաղաքներում առատ է, վաճառականները գնում են այնտեղ, առնում և բերում են մեզ մօտ վաճառում, իսկ ինչ որ

մեր քաղաքում առատ է, այն տանում են ուրիշ տեղեր վաճառելու:

Մեր քաղաքի վաճառականները գլխաւորապէս ապրանք են բերում Տփլիսից, Մոսկվայից, Նիժնի-Նովգորոդից, Վարշավայից, Օդէսայից, Լոդզից (Դերմանիա) ևլն, ու բերում են վերևում յիշված բոլոր ապրանքները: Պարսկաստանից բերում են չոր մրգեր, Կողպից՝ աղ ևլն: Իսկ մեր քաղաքից դուրս են տանում մեծ քանակութեամբ բամբակ, ոչխարի կաշի, խաղող և այլ պտուղների, ցքի, զինի և ուրիշ խմիչքներ և այլ բաներ:

Մեր քաղաքի բնակիչները պարապում են և արհեստներով, օր. դերձակութեամբ, կոշկակարութեամբ, կաշուէգործութեամբ, ատախճագործութեամբ, դարբնութեամբ, ոսկերչութեամբ, ժամագործութեամբ, պղնձագործութեամբ, աման զրուագելով, հացարարութեամբ, գինեգործութեամբ, որմնադրութեամբ, ներկարարութեամբ, կենդանապահութեամբ, շերամապահութեամբ, ձկնորսութեամբ, որսորդութեամբ, լուսանկարչութեամբ, նկարչութեամբ, կան և բրուաններ էլ ևլն:

Կան մարդիկ ևս, որոնք բանեցնում են գործարաններ. դոցա ասում ենք գործարանատէրեր. նշանաւոր են օդու, հանքային ջրի, գարեջրի, միրք

չորացնելու գործարանները: Դործարանում պա-
րապում են զործաւորներ:

Երեւանի բնակիչներից մի քանիսն էլ պարա-
պում են ուսում և զիտութիւն աւանդելով ու-
րիշներին: Կոցա ասում ենք ուսուցիչներ և ու-
սուցչուհիներ: Ուսումն առնում են ուսումնարան-
ներում: Մեր քաղաքի ուսումնարաններն են՝ Հա-
յոց թեմական Հոգեւոր դպրանոցը, որակից 500-ից
աւելի աշակերտ են ուսանում: Ռուս-Հայկական
աւուրը Դայիանեան օրիորդաց և երկսեռ ծխական
ուսումնարանները, արքունական՝ տղայոց Գիմնա-
զիան, ս. Հռիփսիմէի օրիորդաց Գիմնազիան, Ու-
սուցչական դպրանոցը, քաղաքային դպրոցը: Թուր-
քերն ունին մի նորաբաց դպրոց, որ կոչւում է
Ռուս թրքական (Русско-Татарское училище): Կան
մասնաւոր անձանց ուսումնարաններ էլ: Բարձ-
րագոյն ուսումնարանն ստւում է համալսարան:

Ուսանողների գործը հեշտացնելու համար
կան գրավահատանոցներ՝ զիրք առնելու համար:
Գրքերը տալում են տպարաններում: Ուսումն
տարածելու համար ուրիշ քաղաքներում հիմնված
են լինում՝ ընկերացարաններ՝ զիրք կարգալու հա-
մար, թանգարաններ հազուադէպ բաներ աես-
նելու համար, հրատարակում են օրական, շա-
բաթական լրագրեր, ամսագրեր և ին:

Բնակիչներից մի քանիսը միանալով իրար
հետ՝ կազմում են ընկերութիւններ՝ որ և իցէ
նպատակի համար: նշանաւոր է Հայոց քարեգոր-
ծական ընկերութիւնը, կոյ նաև թատրոն, կուբ
և այլն:

Երեւանի բնակիչների մի մասն էլ ծառայում
է գիււնաւաններում, դոքա տալում են ծառայող-
ներ կամ աստիճանաւորներ: Երեւանում ապրող
զինաւոր անձն Երեւանի նահանգապետն է, որն
իրեն յանձնած երկիրը կառավարում է Կայսեր
անունով:

Կրօնը: Երեւանի բնակիչների մեծ մասը կրօն-
քով քրիստոնեայ է: Հայերը, Ռուսները, Արա-
ցիք, Գերմանացիք, Գաղղիացիք, Լէհերը, Թոյները
բոլորն էլ քրիստոնեաներ են: Բացի քրիստոնեա-
ներից Երեւանում կան նաև մահմետականներ
(թուրքեր, Պարսիկներ, Չէրքեզներ) և Մուսի-
սականներ (Հրէաներ) և ին:

Ազօթք անելու համար կան շատ ազօթա-
աներ, այն է՝ եկեղեցիներ, մզկիթներ և սինա-
գոգ՝ որոնց մէջ հոգեւորականները կատարում են
եկեղեցական արարողութիւններ: Մեր հոգեւորա-
կանների զինաւորն է Սրբազան առաջնորդ եպիս-
կոպոսը, որ նստում է ս. Սարգիս մայր եկեղե-
ցու գաւթում՝ առաջնորդարանում: Մեր եպիս-

կողմը կախումն ունի միայն Լճմիածնումն նստող
Կաթողիկոսից: Ռուսները կամ Յուդադաւանների
հոգեւոր զլուխն է նրանց բարեկարգիչ քահանան,
որ կախումն ունի Տփլիսում նստող Էքզարխից:
Մահմեդականների՝ ղազին. որ կախումն ունի շէյ-
խից, որ դարձեալ Տփլիսումն է:

Երեւանում Հայերն ունեն եօթն եկեղեցի, որոնք
են՝ ս. Սարգիս քաղաքի մայր եկեղեցին, ս. Պետ-
րոս - Պողոս, ս. Կաթողիկէ, ս. Անանիա առա-
քեալ (Զորավար), ս. Յովհաննէս, ս. Սիմէօն, ս.
Լուսաւորիչ (նորաշէն), և երկու ուխտատեղեր՝
ս. Աստուածածին (Նորքի թաղում) և ս. Գէորգ
(բերդի մէջ), Ռուսներն ունին մէկ (մայր) եկեղե-
ցի՝ ս. Մարիամ Աստուածածնի հովանաւորու-
թեան անունով (Собо́рная церковь-Покрова Пре-
святой Богородицы) և զօրաց երկու եկեղեցի: Մահ-
մեդականներն ունեն եօթ մզկիթ, որոնք են՝ Յու-
սէին-Ալի-Խանի (գլխաւոր մզկիթը Խանդրաղում),
Հաջի—Սաւրուզ-Ալի-բեկի (Դամբուլաղում), Հա-
ջի-Ղաֆար-բեկի (Դամբուլ) Սարաին—Խանի (Դա-
մբուլ), Զալի-խանի (Շհարում), Հաջի-Խամմիբե-
ղու (Կոնդում) և Անանուն՝ նորաշէն (Շէնթա-
ղում) մզկիթները, իսկ մոփսիսականներն՝ մի ժո-
ղովարան կամ սինագոգ:

Երեւանի բաղաւաղին լարւումն է (Լաւաւարւմնն):

Երեւանը հեշտ կերպով կառավարելու համար

բաժանած է երկու ոստիկանական մասի: Արքու-
նական խճուղի ճանապարհը, որ ձգվում է քա-
ղաքի միջով՝ հիւսիս-արեւելքից դէպի արեւմուտք,
նրան բաժանում է երկու մասը՝ հարաւ-արեւելեան,
որ կաղմում է ոստիկանական առաջին մասը (пер-
вая часть) և հիւսիս-արեւմտեան՝ երկրորդ մասը
(вторая часть): Իւրաքանչիւր մասն ունի իր պաշ-
տօնեաներն: Քաղաքում կարգկանոն պահպանում
է ոստիկանութիւնը, գիշերները խաղաղութիւն պահ-
պանում են գիշերապահները: Քաղաքի զանազան
տեղերում կան հաշտարար դատաւորներ, ուր դի-
մում են գանդատողները: Կան և հոգեւոր առ-
եաններ, օրինակ Հայերն և Մահմետականներն
ունին հոգեւոր Կոնսիստորիաներ:

Մեր քաղաքում կենում են և շատ գինու-
ւորներ կամ զօրք: Նրանցից կարգվում են հեր-
թով պահապաններ Տէրութեան զանազան հիմ-
նարկութիւնների և մեծամեծ պաշտօնեաների գըւ-
նեւում: Նոյնպէս և զէպքն եկած միջոցին նոքա
պարտաւոր են պաշտպանել ինչպէս քաղաքը նոյն-
պէս և երկիրը՝ թշնամեաց յարձակմունքներից:
Ձինուորները բնակվում են զօրանոցներում, ո-
րոնք գլխաւորապէս գտնվում են ամրոցում, որ
գտնվում է քաղաքի հարաւային կողմում, Հրազ-
դանի ձախ ափին ստրահարթի վրայ և ունի տա-
փարակ դիրք: Այս բերդը հիւսիսային, արեւելեան

և հարաւային կողմից շրջապատված է հողէ երկ-
կարգ պարսպով և յիսունաչափ աշտարակներով,
իսկ պարսպի շուրջը գտնվում է լայն և խոր
խրամ, արևմտեան կողմում, որ գտնվում է ան-
մատչելի ժայռերի վրայ, շինված են խաների տը-
ները, որոնց մէջ նշանաւոր է Մարգարի պալատը
(շուշարանդ-այվան), որի ներսին մասը հայելի ա-
պակներով և խաների պատկերներով է զարդա-
րված և մինչև հիմայ կանգուն է:

Բերդի կամ ամրոցի մէջ մարդիկ պաշտպանվում
են թշնամիներէ:

Այս բերդի Հայոց իշխանութեան ժամանակ
կոչվում էր Երեւանի քերդ կամ ամրոց, բայց
յայտնի չէ թէ ով է շինել և երբ: 1583 թ. Օս-
մանցիները հիմքից նորոգում և ընդարձակում են
բերդը: 1604 թ. Պարսիկները՝ պատում են երկ-
րորդ նոր պարսպով, իսկ 1680 թ.՝ Երեւանի մեծ
երկրաշարժից (1679 թ.) յետոյ՝ աւելի են ամրա-
ցնում բերդը, այնպէս որ, մինչև 1827 թ. ա-
ռաջնակարգ և անառիկ բերդ էր համարվում մո-
նառանգ այն ժամանակ, երբ 1804 թ.՝ երկու ա-
միս պաշարելուց յետոյ Ռուսաց զինեակ իշխան
Յիլիանովին չէ յաջողվում առնել այն Պարսիկ-
ներէ: Բայց այժմ աւերված դրութեան մէջ է.
պարիսպների վրայ ընկած քնացել են մի քանի
թողաժողներ:

Զօրանոցների մօտ՝ բերդում գտնվում են
զօրաց հիւանդանոցը, գեղատունը, ցորենի շտե-
մարանը, վառօդի պահարանը, զինուորական զի-
ւանատունը և դատարանը, այստեղ է և Ռուսաց
եկեղեցին ու քրէական յանցաւորների բանար:

Փողայ, Էրապարակ, Խլան և հիւրանոց:

Զաղաքում՝ բնակիչների հեշտ երթևեկու-
թեան համար շինված են փողոցներ: Երեւանի փո-
ղոցների մեծ մասը նեղ է, ծուռումուռ, կարծի
ախտաւ էլն: Կան միայն մի քանի փողոցներ,
որոնք ուղիղ, լայն, երկայն և սալադատված են
և երկու կողմից ունին ձեմլիք մարդկանց համար:
Փողոցների երկու կողմից բարձրանում են մէկ,
երկու և մասամբ երեք յարկանի տներ: Նշանա-
ւոր փողոցներն են՝ Աստաֆեան—արքունական
խճուղի-փողոցը, որով Երեւանը միացած է Տփլիս-
ի և Վաղարշապատի հետ, նախկին արքունական
փողոցը (Царская улица), նոյնպէս և Բէհրուդեան
Նազարեան, տէր Ղուկասեան, Նահանգական, (Гу-
бернская), Շուկայի (Базарная), Դեկատան (Ап-
течная), Ուսումնարանական (Училищная), Թար-
խանեան, Բժշկական (Докторская), Եկեղեցական
(Церковная), Ներկարարի (Маларская), Զարվան-
սարայի, Հայկական (Армянская), Սուլթանեան:

Ամբոցի (Крѣпостная) և ուրիշ շատ փողոցներ:

Մութ գիշերները փողոցները լուսաւորվում են լապտերներով: Հետզհետե մեր քաղաքի փողոցները կանոնաւորվում են, իսկ աները ներքին և արտաքին կողմից գեղեցկանում:

Այն տեղերում, ուր մի քանի փողոցներ հանգիպում են միմեանց, կամ խիստ բանուկ են, շինված են հրապարակների, ինչպէս՝ Առեւտրական, Ուսումնարանական, Խոտի, Վառելափայտի և ինչ ուր քաղաքից կամ շրջակայ գիւղերից բերում են Փայտ, ածուխ, տախտակ, գերան, իւղ, պանիր և այլ նիւթեղէններ՝ վաճառելու: Հրապարակներն և մասամբ էլ փողոցները մաքրվում են, իսկ զլխաւոր փողոցն առաւօտներն և երեկոները ջրվում է:

Օտար մարդկանց մեր քաղաքում գիշերելու և կերակրվելու համար կան շատ իջևաններ, օր. Ղարիբովի, Չառարի, Գիւրջի և ինչ, և հիւրանոցներ, օր. Փրանսիա, Գրանդ-օսել, Օրիանտ, «Լօնդօն», «Բաթում» և ինչ:

Յէշաթա՛ և հնա-Բէն:

Եթէ մի մարդ, իրեն մեռնելուց առաջ թողնում է մի այնպիսի երեւելի բան, օրինակ շինութիւն և ինչ, որ իրեն մեռնելուց յետոյ ևս յիշեցնում է նրան, կոչվում է յէշաթա՛, իսկ այն բա-

ները, որոնք շատ հին ժամանակներից են մնացել, կոչվում են հնութիւններ:

Յիշատակներից նշանաւոր է Երեւանում Մամուի ջրանցքը, որ փորել է տուել Ապիրատ հայ իշխանը 930—940 թ. իսկ հնութիւններից նշանաւոր են՝ աօննիլը, որտեղից անցնում է Դալմա ջրանցքը, ս. Պետրոս—Պօղոս եկեղեցին, որ կառուցված է 1690 թ., Հայոց միւս եկեղեցիները, գլխաւոր մկրիթը, որ կառուցել է Եսէսէին-Ալի—խանը 1764 թ. Մարգարի դահլիճը, որ շինված է 1791 թ. Մահմէդ խանի ձեռքով. Ռուսաց եկեղեցին (Տաճկաց մկրիթ էր), շինուած է 1725 թ. Րադշաբ փաշայի ժամանակ և Հրադրանի կամուրջը, որ շինված է 1680 թ. Զալխանի ձեռքով:

Իսկ—

Մենք քաղաքից դուրս գալով՝ տեղ-տեղ կը պատահենք մարդկանց բնակութիւնների: Մի քանի միմեանց մօտ գտնված մարդկանց այդպիսի բնակութիւններին տաւում ենք գիւղ: Մեծ զիւղը կոչվում է շէն կամ աւան, իսկ աւելի մեծն և հարուստը՝ զիւղաքաղաք:

Իւրաքանչիւր գիւղ կամ շէն ունի մէկ կամ երկու եկեղեցի. սակաւ գիւղեր կպատահեն, որոնք

եկեղեցի չեն ունենալ: Թէ շէնի և թէ գիւղի փողոցները ծուռ, նեղ, անմաքուր են, աները մեծ մասամբ գեանափոր կամ կիսագեանափոր: Երբեմն պատահում է մի կամ երկու յարկանի քարաշէն աներ: Դռները շատ մանր են լինում: Լուսամուտներ մեծ մասամբ չեն ունենում և լոյսը գալիս է տան առաստաղից երգիկից:

Երևանի շրջակայքում կան շատ թէ շէներ և թէ գիւղեր, օր. Քանաքեռ գիւղը, որ եօթը վերստ հեռաւորութիւն ունի Երևանից և գտնվում է բարձրավանդակի վրայ Երևանի հիւսիս-արևելեան կողմում: Այն գիւղում ամառը հով է լինում: ուստի Երևանի գօրքը գնում է այնտեղ ամառանոց: Աւարանոց ասում են այն տեղերին, ուր աւելի հով է լինում և մարդիկ ամառն այնտեղ են գնում ապրելու: Ինչպէս Ծախկաձոր (Դարաշիշակ) Դարաքիլիսայ գիւղերը, ուր քաղաքի բնակչաց մեծ մասը գնում է ամառանոց:

Կան և ուրիշ գիւղեր էլ Երևանի շրջակայքում օրինակ՝ Առինջ, Աւան, Երամուտ, Մհուր, Զափարապատ, Փարաքար, Աշտարակ, Դամարլու գիւղերը, Վաղարշապատ գիւղաքաղաքն ևլն:

Շէնի բնակիչները կոչվում են շինական, իսկ գիւղի բնակիչները՝ գիւղացիք: Թէ շինականներն և թէ գիւղացիք պարապում են երկրագործու-

թեամբ, այգեպահու թեամբ, անասնապահ թեամբ, խաշնարածու թեամբ, ձկնորսութեամբ, որսորդութեամբ, փայտահատութեամբ, մեղուպահութեամբ, շերամապահութեամբ ևլն: Գիւղացիք իրանց ձեռք բերածների մի մասը պահում են իրանց գործածութեան համար, իսկ աւելորդը տանում են մօտիկ քաղաքներն և վաճառում:

Կառավարութիւնը: Խորաքանչիւր գիւղ կամ շէն ունի իր կառավարիչը, որ կոչվում է տանուտէր, որի պարտքն է գիւղում պահպանել հանգստութիւն և խաղաղութիւն: Կան և գիւղական դատաւորներ, որոնք քննում են և վճռում գիւղականների մէջ պատահած անբաւականութիւնները: Բոլոր գիւղերը միասին ունեն մի ընդհանուր կառավարիչ, որ նստում է այն քաղաքում, որի շուրջը գտնվում են այդ գիւղերը: այդ ընդհանուր կառավարիչն է գաւառապետը: Քաղաքը՝ իր շրջակայ բոլոր գիւղերով միասին կոչվում է գաւառ: Այն քաղաքը, որի շուրջը գտնվում են գիւղերը, կոչվում է գաւառական քաղաք: ուրեմն Երևանն իր շրջակայ գիւղերով միասին կոչվում է Երևանի գաւառը:

Կահանէ:

Երևանի գաւառը շրջապատված է շատ ուրիշ գաւառներով, որոնք են՝ Աղեքսանդրապոլի,

Էջմիածնի, Սուրմալուի, Մախիշեանի, Շարուր-
Դարալագեացի և Նոր—Բայազիտի գաւառները:
Այս բոլոր գաւառները միասին կազմում են Նորե-
ւանեան նահապետի մի քանի գաւառներ մի-
ասին խմբված՝ կազմում են նահանգ:

Ամբողջ նահանգն ունի կառավարիչ, որ կոչ-
վում է նահանգապետ, որ նստում է գաւառա-
կան քաղաքներից ամենամեծում, որ կոչվում է
նահանգական քաղաք:

Գաւառական քաղաքներում բացի գաւառա-
պետը, կան և հաշտարար դատաւորներ էլ, իսկ
նահանգական քաղաքում՝ նահանգական դատաւ-
որանաւորներ:

Սկզբում Երեւանն աւան է եղած, 661 թուա-
կանին՝ զիւղաքաղաք, այնուհետեւ առաջ գնա-
լով՝ նշանաւոր քաղաք է դարձել, որովհետեւ Հա-
յոց թագաւորութիւնը վերջանալուց յետոյ մեր
երկիրը տիրապետող օտարազգի թագաւորներից
ուղարկված կառավարիչները, տեսնելով քաղաքի
դրքի յարմարութիւնն ու ամրութիւնը թշնամի-
ների յարձակմանց դէմ իշխանանիստ քաղաք
դարձրին. և իրանց աթոռներն այստեղ հաստա-
տելուց յետոյ՝ մեծամեծ շինութիւններով և նո-
րոգութիւններով շքեղացրին քաղաքը, այնպէս որ
մինչև 1841 թ. նա համարվում էր կուսակալու-


թեան քաղաք (областной городъ), 1841—1850
թ. գաւառական քաղաք, իսկ 1850-ից մինչև այ-
ժմ՝ նահանգական քաղաք է, որովհետեւ այստեղ
է նստում նահանգապետը:

Երեւանի նահանգն իրեն մօտ գտնված մի
քանի նահանգներով միասին կազմում է Ղովկաս
երկիրը, որի գլխաւոր կառավարիչը՝ կառավարչա-
պետը նստում է Թիֆլիսում:


Քարտէզ:

Եթէ մեր քաղաքի յատակագծին կցենք Երեւա-
նի շրջակայքում գտնված գիւղերի, սարերի, ան-
տառների, գետերի յատակագծերը, մենք կը ստա-
նանք Երեւանի գաւառի յատակագիծը, իսկ եթէ
այդ յատակագծին կցենք միւս գաւառներինը՝ այն
ժամանակ կը ստանանք՝ Երեւանի նահանգի յատա-
կագիծն և վերջապէս եթէ աւելի ընդարձակենք
կը ստանանք Ղովկաս երկրի յատակագիծը: Մի
խօսքով մենք կարող ենք կազմել թղթի վրայ և
մեծ տեղի յատակագիծը, միայն այս դէպքում
վերստի կամ մզոնի փոխարէն պէտք է ընդունենք
մասնաշափը յատակագծի վրայ (և ոչ արշինի փո-
խարէն՝ երբ կամենում էինք դասատան յատակա-
գիծը ստանալ), որպէս զի հնար լինի թղթի վրայ
տեղաւորելու մի որ և է մեծ տեղի յատակագի-

ծը: Այդպիսի յատակագծի վրայ քաղաքները կե-
րեան փողրիկ շրջանակների չափի գիւղերը՝ կէտե-
րի, գետերը՝ ոլորուն գծերի ձևով ելն: Մի ամ-
բողջ երկրի կամ նրա մասի այդպիսի մի յատա-
կագիծը, որի վրայ զանազան տեղերը նշանակվում
են զանազան պայրմանական նշաններով՝ կոչվում
է քարտեզ:



Հայկ. լեզվի քերականության մասին
հարցազրույց Պրոֆ. Գ. Բ. Բաբայանի հետ
Հայկ. լեզվի քերականության մասին
հարցազրույց Պրոֆ. Գ. Բ. Բաբայանի հետ
Հայկ. լեզվի քերականության մասին
հարցազրույց Պրոֆ. Գ. Բ. Բաբայանի հետ
Հայկ. լեզվի քերականության մասին
հարցազրույց Պրոֆ. Գ. Բ. Բաբայանի հետ



Հայաստանի Ազգային գրադարան



NL0438047

21091

